




ԱՐԱՐԱՏ

ԿՐՈՆԱԿԱՆ — ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — ԾԱՆԿԱԶԱՐ-
ԺԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԱՇՏՅՈՆԱԿԱՆ.

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԻՅՆԵ Լ. ՏԱՐԻ ԶԵՄԵՐ ՏԵՄԵՐՈՐԳ ԶՈՎՏԵՄԲԵՐ 1896 Թ.

ԿՐՈՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՓՐԿԱՐԱՐ ԼՈՒՍԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ.

«Արի որ նմանդ եւ կանգնեաց
ի մեռելոց, եւ լուսաւորեսցէ զքեզ Զրիս-
տոս»:

Եփես. Ե. 13.

Պօղոս Առաքելայն այս խօսքը մէջ է բե-
րում իւր թղթում իբրեւ վկայու-
թիւնս. Գրեից, բայց մինչեւ այժմ մեկնաբանների
ջանքն ի զուր է անցել՝ գտնել աստուածաշուն-
չի կամ գոնէ ուրիշ մի որեւէ հին զրուած-
քի մէջ այն տեղը, որ նա կարող էր ի նկա-
տի ունեցած լինել իւր վկայութեան համար:
Եւ այսպէս այդ բազմաթիւ անգամ նախադա-

սութեան առաջին ստուերական հեղինակը
մնում է մեզ գեռ անձանօթ. բայց յայտնի
է միթէ իսկական հեղինակը, որ ահա հա-
զարաւոր տարիներէ ի վեր խօսում է զնդ
ամենայն երկիր և մինչև ի ծագս աշխարհի,
և սակայն նորա զարթուցիչ ձայնին նոյնչափ
պէտք ունի աշխարհն այսօր, որչափ և այն
օրը, երբ Պօղոս առաքելի բերնից էր հըն-
չում այդ ձայնը՝ աւետարանի, բրիստոնեայ
համայնքի ներքին գիտակցութեան ձայնը:

Առաքելալը հեթանոս ժողովուրդներ ու-
նէր ի նկատի, հոգևոր բարոյական մեռելու-
թեան քնի մէջ ընկղմած մարդկութեանն էր
հրաւեր կարգում՝ աչք բանալ, ոտքի ելնել,

նոր հողի նոր կեանք ստանալ՝ այն կենդանարար լուսոյ ազդեցութեամբ, որ Զրիստոսի անմահական գերեզմանից ծագելով, տարածուում հեռագհեռէ, թափանցում, լուսաւորում էր իւր ճառագայթներով հեթանոս աշխարհի մութ մութ անկիւնները: Այժմ քրիստոնեայ անունն իւր վերայ կրող աշխարհն է, որի վերայ ծանրանում է հոգեւոր խաւարի բարոյական մեռելութեան քունը: Աստուծոյ արեւն առաջուայ նման փայլում է երկնքից, ու մարդկանց արուեստը երկրի վերայ ճգնում է մրցել նորա հետ՝ խաւար զիշերն անդամ լոյս ցրելէ դարձնել, մարդիկ անցնում են լուսաւոր փողոցներով, անցնում են Աստուծոյ անուան կանգնած հոյակապ տաճարների առջևից՝ խօսում, վիճում, բարձրագոյ ճառեր են կարդում՝ յանուն լուսաւորութեան, յանուն բարոյականութեան յանուն մարդասիրութեան: Բայց և այնպէս անպատմելի ու անօրինակ անօրէնութիւններ են կատարուում անընդհատ այդ աշխարհի աչքի առաջ, դժոխային մեքենայութիւններ են լարուում, զիւական անզգամութեամբ հայհոյուում է Զրիստոսի անունը՝ ամեն արդարութեան, ճշմարտութեան սրբութեան անուն, տեսնում են ամենքն ու անցնում, լուսաւոր աշխարհն այդպիսի չնչին բաներով դրաղուելու միջոց չունի, երկնքի ժողովարհներն են նորա հետաքրքրութեան առարկան: Քաղաքակիրթ մարդու նշանաբանն է ձեռք մեկնել այնտեղ միայն, ուր անձնական շահ կայ: Եւ ահա թագաւորում է կրկին անձնապաշտութեան դեւը, աշխարհի կարծեցեալ տէրը: սիրոյ ու տնձուիրութեան խաչն անարգուած ընկած է ոտքի տակ, և դժոխքն անարգել իւր խաւարային գործն է առաջ տանում...

Բայց մեր աչքը դառնում է ախամայ գէպի այս դժոխային թագաւորութեան այն զաւառը, որ արհաւիրքների զխաւոր կեդրոնն է, գէպի ուր դարձած են ամիսներէ ու տարիներէ ի վեր սոսկման և զայրոյթի արտայայտութեամբ ամեն տեսնող աչքեր, և ահա այդտեղ ջախջախուած ընկած մեռել ժողովուրդն է, որի համար ամենից աւելի կցանկանայինք, թէ հնչէր ականջին առաքելական զարթուցիչ ձայնը: Ալբի կանգնեաց ի

մեռելոց, և լուսաւորեսցէ զքեզ Զրիստոս: Աւայ շատ եղան նորան զարթեցնել փորձողներ, երբ գեռ այս անտանելի վիճակի մէջ էր, իբրեւ դարաւոր թմրութիւնից արթնացող մի մանկացած ծերունու օրօր կարգացին, անուշ երազներ ներշնչեցին, և յանկարծ, մի անգգոյշ շարժումից արթնացաւ նա... ողբալի՜ շարժում, չարաբաղդ արթնութիւն, որ քրնաթաթախ մոլորեալին կարծեցեալ լուսոյ շամանգաղի մէջ գէպի առաջը բացուած անխուսափելի կորստեան անդունդը պիտի զլորէր: Եւ ահա երբ անգունդի խորքումն է արգէն, ով կարող է նորան կրկին ոտքի կանգնեցնել, վեր հանել և ի կեանս վերականգնել, եթէ ոչ նոյն Հղօրը, որ Եղեկիէլի մարգարէական աչքի առաջ անապատում ցրուած ոսկորներին կենդանութիւն տուաւ և նոր ժողովուրդ կազմեց, ի՞նչը կարող է նորան սթափեցնել ու անմոլար, անսպթաք կերպով ուղիղ ճանապարհի վերայ հանել, եթէ ոչ աւետարանական այն լոյսը, որ ամբողջ մարդկութեան համար միակ տպահով ուղեցոյց է եղել մահացուցիչ խաւարից գէպի անմահական երանութիւն, որ անթիւ կոռուսեալների ցոյց է տուել կեանքի իսկական ճանապարհը:

Ամեն դժբաղդ փորձ իւր խրատիչ կողմնունի, և որքան մեծ է դժբաղդութիւնը, նոյնքան աւելի մեծ լընութիւն է պահանջում արուած խրատի նշանակութիւնն ըմբռնելու և պէտք եղածն ուսանելու համար: Եթէ մեզ վերջապէս ժամանակ է սթափել և կշռադատել այն անօրինակ դժբաղդութիւնը, որին այսօր հայ ժողովուրդն է ենթակայ, եթէ հակառակ շրջապատող բոլոր յուսահատական պայմաններին, նորան այս անկանելի դրութիւնից ելնելու մի շաւիղ ցոյց տալ պէտք է այնուամենայնիւ՝ մեր կշռադատութեան չափ ղնող, մեզ առաջնորդող, նոյն բարոյական ըկրզեւնները պէտք է լինին, որ Զրիստոսի փրկարար լուսաւորութեան աւետարանն է տալիս: Ամեն մի նոր օր ներկայ աշխարհում նորանոր զօրեղ ապացոյցներ է դնում մեր առաջ, որ ամենամեծ ազդերն անգամ իրենց զօրութեան, իրենց փառքին, իրենց հարստութեան, այդ նոյն իսկ իրենց լուսաւորութեան չնայած՝ շատ երջանիկ չեն: Թաճախ արտա-

քին շուքի ներքոյ այնպիսի մեծ բարոյական
անակութիւն է ծածկուում այդպեղ, որ ա-
ռողջ դատողութեանս վեհ հողու տէր անձի
աչքում աւելի ողորմելի են ներկայանում նո-
քայ քան հրապարակի վերայ եղած խեղճե-
լը: Բարոյաբանութիւնը նորանոր յազմա-
նակներ է կանգնում այն, ճոխացնում ու
գեղեցկացնում է կեանքը: Բայց այդ կեանքը
քչերն են վայելում և նոցա վայելածին ան-
միաները միայն նախանձել կարող են: մեծա-
մասնութիւնը տաղնապի մէջ է և աւելի դառ-
նութիւններ է կրում զուցէ քան առաջ: Սա-
կայն և այն դէպքում, երբ մեծ աշխարհը
իւր լուսաւորութեան և զօրութեան շնոր-
հիւ ճոխութիւն և փառք ձեռք բերէր՝ փոքր
մարդոց, փոքր ժողովուրդների համար խիս-
տան փառքի աղբիւր իւր ներքին բարոյական
զօրութիւնն է մեռում՝ մի զօրութիւն, որ իւր
նշանակութիւնը պահում է նաև ամենափոքր
բաների մէջ և ոչ մի արտաքին ոյժի առաջ
յի խորտակուում, տեղի չէ տալիս: Աւաղ,
ինչքան աւելի տարբեր, աւելի բարւոք վի-
ճակ կունենար հայ ժողովուրդն այսօր, եթէ
իւր բարոյական ոյժերը գնահատած լինէր, նոցա
զարգացման համար աշխատէր, արթնանար
այն ժամանակ միայն, երբ առաքելական
ձայնը՝ աւետարանի ձայնը նորան կրկնե-
լէր: Ընթանար այն ճանապարհով, որ
Քրիստոս է լուսաւորում: Այն, իւր կա-
պանքների և ներութեան մէջ ևս երա-
նելի կլինէր նա այն ժամանակ ու աղբերի
նախանձը կշարժէր. և եթէ մինչև այժմ իսկ
մի որոշ չափով նախանձ չարժեք է՝ միթէ
իւր ներքին արժանեացի, իւր բարոյական զօ-
րութեան համար չէ եղել: Սակայն պատմու-
թեան արգար դատաւորն անշուշտ պիտ նե-
րէ անցած սերունդին նորա սխալներն, եթէ
գործել է, այն անհուն տառապանքների
փոխարէն, որ անմեղ տեղը կրեց. ներկայ սե-
րունդն է, որ անցեալի պատիժը կտանայ, եթէ
խրատ չառնէ, ընդունած սարսափելի դասից:
Եւ ամեն անգամ, երբ մի նոր սերունդ
հանդէս է գալիս կրթութեան ասպարէզի վերայ
հից դասեր առնելու՝ ամենանուիրական
պարտք է կրթողի համար քննել և կշռադա-
տել թէ արդեօք ինչ բնաւորութիւն պէտք

է ունենան իւր աւանդած դասերը. արդեօք
այն ձայնը, որով նա մանկական անմեղութեամբ
ննջող, կամ մեռեալ անկրթութեան մէջ թրմ-
րած հոգիները պէտք է արթնացնէ և կեն-
դանացնէ՝ կեանքի իսկական կայարանից է իջ-
նում: արդեօք այն լոյսը, որով նա խաւար
մութերը պէտք է լուսաւորէ և ուղիղ ճանա-
պարհ հղից տայ՝ ճշմարտութեան Արեգակի,
Քրիստոսի լոյսն է. չէի մի յայտնէտէ իցեմք
աղայք խռովակալք և տատանեալք յամենայն
հոգմոց վարդապետութեան, խարէութեամբ
մարդկան՝ խորամանկութեամբ ի խարէութիւն
մոլորութեան, այլ ճշմարտեալք սիրով՝ աճե-
ցուցողք ի նա զամենայն, որ է գլուխ Զը-
րիստոս:

Կ. Վ.



ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՂՈՒԱ-
ՆԻՅ ՀԵՏ
ԸՍՏ
ՎՐԹԱՆԷՄ ԲԵՐԹՈՂԻ
ԳՐՈՒԹԵԱՆ:

Մեր եկեղեցւոյ պատմութեան համար
ամենից աւելի պարզաբանութեան կարօտ եւ
հետաքրքիր խնդիրներից մէկն է նորա ունե-
ցած յարաբերութիւնը երկու հարեան ազ-
գերի՝ վրաց եւ Աղուանից հետ: Վրաց ան-
ցեալի հարկաւ աւելի ծանօթ է, աւելի է ու-
սումնասիրութեան առարկայ եղել. եթէ նոցա
եկեղեցւոյ ծագման եւ մերի հետ աղընչու-
թեան մասին պակասում են տույզ մանրա-
մասն տեղեկութիւններ՝ մեր ձեռքում կայ
զոնէ մի կարեւոր պատմական յիշատակարան:
Ուխտանէսի պատմութեան միջոցով լոյս տե-
սած գրագրութիւնը, որ թոյլ է տալիս երկու
եկեղեցիների բաժանման գործը պարզել:
Տարբեր է խնդիրը Աղուանից նկատմամբ:
Սոցա մասին մենք գրեթէ աւելի քան չգի-
տենք: քան ինչ որ Մ. Կաղանկատուացին է
պատմում. իսկ նա ընծայել է մեզ միայն մի
կցկտուր քաղուածք իւր ձեռքն հասած յի-